Կարապետի վանք, Սոռփ գիւղի մօտ, եւ Ս. Յիզդիբուզդի վանքը, Թուխ գիւղի մօտ:

Ի՞նչ ազդեցութիւն ունեն այդ վանքերը իրանց շրջակայքի վրայ:

Անցնում էինք մի հայաբնակ մեծ գիւղի մօտով: Գիւղից շատ չէինք հեռացել, մեր ուշադրութիւնը գրաւեց մի խառնաձայն աղմուկ, աղաղակ: Բլուրների միջից միմեանց ձայն էին տալիս, գոչում էին՝ «անցաւ՛..., բռնեցե՛ք»... եւ աղաղակները հետզհետէ սաստկանում էին: Ձայները աւելի մանուկ հասակի ձայներ էին: Մենք կարծեցինք, թէ գայլ է մօտեցել բլուրների վրայ արածող ոչխարներին: Երբ մօտեցանք եւ տեսանք, թէեւ գայլ չէր, բայց նրա նման մի բան էր:

Մի մարդ ձորի միջով փախչում էր, իսկ գիւղի փոքրիկ գառնարածները ամէն կողմից քարեր էին նետում նրա վրայ: Հալածականը ոչ մի տեղ չէր գտնում ապաստանելու, եւ փրկութեան բոլոր յոյսը դրել էր արագ ոտների վրայ: Կարծեցինք, թէ այդ մարդը գառն է գողացել եւ, գողութեան մէջ բռնուելով, փոքրիկ հովիկները հալածում են նրան: Ջալլադը իր ձին առաջ քշեց, տեղեկանալու եղելութիւնը: Նրա ձայնից երեխաները հանդարտուեցան, փախստականը կանգ առեց: Կարծես, աստծուց նրան օգնութիւն հասաւ:

Դա մի փոքրիկ, կարճահասակ մարդ էր, կիսաեւրոպական եւ կիսաասիական աղտոտ հագուստով, եւ ձեռքում բռնած ունէր իր հասակից աւելի երկար մի ցուպ, իսկ կողքից քարշ էր ընկած մի մեծ պայուսակ սեւ կաշուց: Թուխ դէմքը, նեղ, փայլուն աչքերը եւ ծնօտի վրայ կծիկ դարձած սեւ, գանգրամազ մօրուքը՝ առաջին անգամից այն կարծիքն էին արտայայտում, որ դա կամ հրէայ մանրավաճառ պէտք է լինէր, կամ թափառական բժիշկ եւ կամ մի բոշայ, որ պարապում էր ֆալջիութեամբ (կախարդութեամբ) :

Երբ մենք կանգնած նայում էինք այդ օտարոտի թափառականի վրայ, փոքրիկ հովիւները նոյնպէս ցած իջան բլուրների բարձրութիւններից եւ, իրանց երկար ցուպերի վրայ յենուած, շրջապատեցին նրան: Նրանք քարեր ունէին բռնած, բայց չէին խփում: Թափառականը տակից մի առանձին ներողամտութեամբ նայում էր նրանց վրայ եւ խուլ մրթմրթում էր: Չգիտեմ, նահատակի սառնասրտութիւն էր այդ, թէ վշտացած մարդու ապշութիւն: Նոր Ստեփաննոսը գտնուում էր իր քարկոծողների շրջանի մէջ:

— Այդ մարդը անհաւատ է, — ասաց երեխաներից մէկը:

— Պաս է ուտում, — աւելացրեց երկրորդը:

— Սատանայական գրքեր է ծախում, — վրայ բերեց երրորդը:

— Մեր տէրտէրի ձեռքը չէ համբուրում, — նկատեց չորրորդը: